

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 4/4

2 փետրվարի 2016 թ.

Քննարկվեց Ա/Ձ Արտաշես Հովհաննիսյանի 28.12.2015 թ-ի գանգատը մինչև 26.05.2015թ. իր կողմից եկամտային հարկի մասով վճարված գումարները որպես այդ ժամանակահատվածում գոյացած կանխավճարի գումարներ դիտարկելու վերաբերյալ:

Ա/Ձ Արտաշես Հովհաննիսյանի գանգատում բերված փաստարկները.

Ա/Ձ Արտաշես Հովհաննիսյանը պետական գրանցում է ստացել 2014 թ-ի դեկտեմբերի 26-ին: Ա/Ձ Արտաշես Հովհաննիսյանը հանդիսանում է շրջանառության հարկով հարկվող գործունեության տեսակների մասով հարկ վճարող:

Համաձայն մնացորդների վերաբերյալ տեղեկանքի 26.05.2015թ.-ի դրությամբ նրա մոտ առկա է եղել 5.000 ՀՀ դրամի չափով եկամտային հարկի ապառք և 50 ՀՀ դրամի չափով տույժ:

Գանգատաբերը հայտնում է, որ պետական գրանցում ստանալու պահից մինչև 26.05.2015թ. փաստացի գործունեություն չի իրականացրել և եկամուտ չի ստացել:

Չնայած այն հանգամանքին, որ Ա/Ձ Արտաշես Հովհաննիսյանը հարկային մարմին չի ներկայացրել փաստացի գործունեություն չիրականացնելու վերաբերյալ հայտարարություն, իսկ մինչև 2015 թ-ի փետրվարի 15-ը դիմում է ներկայացրել հարկային մարմին շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ, Ա/Ձ Արտաշես Հովհաննիսյանը փաստացի գործունեություն չի իրականացրել: Նա սկսել է գործունեություն իրականացնել միայն 26.05.2015թ.-ից սկսած՝ պայմանագիր կնքելով պետական կարիքների համար մատակարարում իրականացնելու վերաբերյալ:

Շեղանկապես պետական գնումներ կազմակերպող մարմնի կողմից հարցում է կատարվել ՀՀ ֆինանսների նախարարություն: Ստացված պատասխանի համաձայն 26.05.2015թ.-ի դրությամբ Ա/Ձ Արտաշես Հովհաննիսյանի եկամտային հարկի գծով պարտավորությունը կազմում է 5.000 դրամ ապառք և 50 դրամի չափով տույժ, որը հետագայում Ա/Ձ Արտաշես Հովհաննիսյանի համար առաջացրել է վտանգ 1.000.000 դրամի չափով տուգանքի պարտավորություն կրելու համար:

Նշված հարկային պարտավորությունները իրենց չափով շատ նվազ են, այն հիմք է հանդիսացել Ա/Ձ Արտաշես Հովհաննիսյանին 1.000.000 դրամի չափով տուգանքի ենթարկելու համար, այն դեպքում, երբ մատակարարվող գործարքի ողջ արժեքը մի քանի անգամ նվազ է տուգանքի գումարի չափից:

Ա/Ձ Արտաշես Հովհաննիսյանը չի կարող հանդիսանալ «եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասի հիմքով եկամտային հարկ վճարելու պարտավորություն կրող անձ, և 26.05.2015թ.-ի դրությամբ նրա մոտ չէր կարող առկա լինել եկամտային հարկի մասով ոչ ապառքի և ոչ էլ տույժի գումարներ:

Վերոգրյալ հիմնավորմամբ գանգատաբերը դիմել է Կենտրոնի հարկային տեսչություն՝ համապատասխան վերահաշվարկ կատարելու և մինչև 26.05.2015թ.-ը Ա/Ձ Արտաշես Հովհաննիսյանի կողմից եկամտային հարկի մասով վճարված գումարները որպես այդ ժամանակահատվածում գոյացած կանխավճարի գումարներ դասելու վերաբերյալ, սակայն վարչական մարմինը 16.10.2015թ. թիվ 8201/6 գրությամբ մերժել է կատարել հայցվող գործողությունը:

Վարչական մարմինը չի ներկայացրել որևէ հիմնավորում, չի կատարել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, եկել է սխալ եզրահանգման և մերժել է կատարել համապատասխան վերահաշվարկ: Կենտրոնի հարկային տեսչությունը գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով Ա/Ձ Արտաշես Հովհաննիսյանի իրավունքները:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2008 թ-ի սեպտեմբերի 30-ի թիվ 9 պաշտոնական պարզաբանման 4-րդ կետի համաձայն՝ եթե հարկ վճարողը (կազմակերպության, անհատ ձեռնարկատեր, նոտար) փաստացի չի իրականացնում գործունեություն (այդ թվում նաև՝ չի հանդիսանում գործատու կամ հարկային գործակալ), ապա՝ այդ ժամանակահատվածում ներառվող՝ հարկատեսակների համար օրենքով սահմանված լրիվ հաշվետու ժամանակաշրջանների համար հարկ վճարողն իր հաշվառման վայրի հարկային տեսչություն հաշվետվություններ (այդ թվում՝ «գրոյական») չի ներկայացնում:

«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Ռեզիդենտի համար հարկվող օբյեկտ է համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացման ենթակա՝ հաշվեգրված (պասիվ եկամուտների, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց մասով՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ստացված) հարկվող եկամուտը:

Ա/Ձ Արտաշես Հովհաննիսյանը պետական գրանցում ստանալու պահից մինչև 26.05.2015թ. փաստացի գործունեություն չի իրականացրել և եկամուտ չի ստացել:

Ա/Ձ Արտաշես Հովհաննիսյանը գտնում է, որ այս պայմաններում իր մոտ եկամտային հարկի գծով պարտավորություններ չէին կարող առաջանալ:

Վերոգրյալի հիման վրա Ա/Ձ Արտաշես Հովհաննիսյանը խնդրում է Կենտրոնի հարկային տեսչության գործողությունները ճանաչել ոչ իրավաչափ և կատարել համապատասխան վերահաշվարկ՝ մինչև 26.05.2015թ. եկամտային հարկի մասով վճարված գումարները դասել որպես այդ ժամանակահատվածում գոյացած կանխավճարի գումարներ:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ Ա/Ձ Արտաշես Հովհաննիսյանը պետական գրանցում է ստացել 2014 թ-ի դեկտեմբերի 26-ին:

15.02.2015 թ-ին Ա/Ձ Արտաշես Հովհաննիսյանը ներկայացրել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն և համարվել է շրջանառության հարկ վճարող:

ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ կողմից Ա/Ձ Արտաշես Հովհաննիսյանին տրամադրված մնացորդների վերաբերյալ տեղեկանքի համաձայն 26.05.2015թ.-ի դրությամբ նրա եկամտային հարկի գծով պարտավորությունները կազմել են 5.050 դրամ: Նշված պարտավորությունն առաջացել է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված եկամտային հարկի 5 հազար դրամը (2015 թ-ի մայիս ամսվա համար) սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով: Համապատասխան վճարումը Ա/Ձ Արտաշես Հովհաննիսյանի կողմից կատարվել է 01.06.2015 թ-ին, որի հետևանքով նշված պարտավորությունը վերացել է:

Տվյալ դեպքում Ա/Ձ Արտաշես Հովհաննիսյանը գտնում է, որ պետական գրանցում ստանալու պահից մինչև փաստացի գործունեություն իրականացնելն ընկած

ժամանակահատվածում (մինչև 26.05.2015թ.), անկախ հարկային մարմին շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ դիմում ներկայացված լինելու և գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու վերաբերյալ հայտարարություն ներկայացված չլինելու հանգամանքներից, մինչև 26.05.2015թ. եկամտային հարկի գծով վճարված գումարները ենթակա են վերահաշվարկման՝ դրանք դիտարկելով որպես կանխավճարի գումարներ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ շրջանառության մեջ է դրված «Անհատ ձեռնարկատերերի (նոտարների) գործունեություն չիրականացնելու մասին հայտարարության ներկայացման վերաբերյալ» ՀՀ ֆինանսների նախարարի թիվ 1 պաշտոնական պարզաբանումը, որի 1-ին կետով հստակ պարզաբանված է, որ շրջանառության հարկ վճարող համարվելու համար հայտարարություն ներկայացրած անհատ ձեռնարկատերերը (նոտարները) գործունեություն չիրականացնելու մասին հայտարարության չներկայացնելու դեպքում եկամտային հարկը հաշվարկում (վճարում) են «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված չափերով:

Սակայն անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ ՀՀ ֆինանսների նախարարի վերոգրյալ թիվ 1 պաշտոնական պարզաբանումը դեռևս չի ստացել իրավական ուժ: Հետևապես, մինչև թիվ 1 պաշտոնական պարզաբանման իրավական ուժ ստանալն ընկած ժամանակահատվածում անհրաժեշտ է ղեկավարվել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2008 թ-ի սեպտեմբերի 30-ի թիվ 9 պաշտոնական պարզաբանման դրույթներով, որի 4-րդ կետի համաձայն՝ եթե հարկ վճարողը (կազմակերպության, անհատ ձեռնարկատեր, նոտար) փաստացի չի իրականացնում գործունեություն (այդ թվում նաև՝ չի հանդիսանում գործատու կամ հարկային գործակալ), ապա՝ այդ ժամանակահատվածում ներառվող՝ հարկատեսակների համար օրենքով սահմանված լրիվ հաշվետու ժամանակաշրջանների համար հարկ վճարողն իր հաշվառման վայրի հարկային տեսչություն հաշվետվություններ (այդ թվում՝ «գրոյական») չի ներկայացնում:

Վերոգրյալից հետևում է, որ հարկ վճարողի կողմից փաստացի գործունեություն չիրականացնելու ժամանակահատվածում, ըստ էության, «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված եկամտային հարկի գումարները չպետք է հաշվարկվեն (վճարվեն):

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասի» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Չ Ո Ս Է՝

Ա/Ձ Արտաշես Հովհաննիսյանի 28.12.2015 թ-ի գանգատը բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

